ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

Ժողովուրդ

30 մարտի շաբաթ 2024
տպագրության ԺԳ տարի

44
(2894)

100 դրամ

քաղաք Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

ԹԵԿՆԱԾՈՒԹՅՈՒՆԻՑ ՀՐԱԺԱՐՎԵԼԸ ԽՈՐ ԱՐՄԱՏՆԵՐ ՈՒՆԻ

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկությունների համաձայն՝ ՀՀ վերաքննիչ դատարանի դատավոր Վազգեն Ռշտունու՝ ԲԴԽ դատավոր անդամի թեկնածությունից հրաժարվելը բավականին խոր արմատներ ունի: Մեզ հասած տեղեկությունների համաձայն՝ ժողովից առաջ ՀՀ իշխանության ամենաբարձր օղակներից նրա առաջ կոնկրետ հարցեր են դրել, որոնք անլուծելի են եղել բարոյականության դաշտում, եւ, ահա, դատավորը կայացրել է որոշում հրաժարվել ԲԴԽ գնալու մտադրությունից:

Նշենք, որ Վերաքննիչ քրեական դատարանի դատավոր Վազգեն Ռշտունին հայտարարություն է տարածել, որում, մասնավորապես, ասվում է. «Ցանկանում եմ իրազեկել, որ վերջին օրերին տեղի են ունեցել որոշակի իրադարձություններ, որոնցով պայմանավորված՝ դժվարին որոշում եմ կայացրել այս պահին չհավակնել Բարձրագույն դատական խորհրդի դատավոր անդամի թափուր տեղին:

Ինձ համար մեծագույն պատիվ կլիներ դատավորներին տվյալ մարմնում ներկայացնելը, սակայն նժարին դրված էին իմ անձի հետ առնչություն չունեցող հարցեր, որոնք, իմ գնահատմամբ, ավելի կարեւոր են, քան Բարձրագույն դատական խորհրդի անդամ դառնալը. հակառակ մոտեցումը կարող էր գնահատվել եսասիրական:

Հայցում եմ բոլոր դատավորների ներողամտությունը, հատկապես՝ նրանց, ովքեր իմ՝ Բարձրագույն դատական խորհրդի անդամ դառնալու հետ կապված ունեցել են դրական սպասումներ»:



Հանրության հետ կենդանի շփումների եւ տարբեր սոցհարցումների արդյունքները հիասթափեցրել են հայրենի իշխանություններին: Արդեն տեւական ժամանակ է, ինչ Նիկոլ Փաշինյանը թե՛ անձամբ է գնում մարզեր, գյուղեգյուղ շրջում, տեղացիների հետ շփվում, թե՛ իր թիմակիցներին է ուղարկում այնտեղ: Փաշինյանի եւ ՔՊ-ականների այս այցերը մեկ հստակ նպատակ ունեն՝ շոշափել հանրային տրամադրությունները եւ հասկանալ՝ ինչ վարկանիշ իրենք ունեն: Ահա այս այցերը, մարդկանց հետ կենդանի շփումները, մեղմ ասած, խորը հիասթափեցրել են իշխանություններին, քանի որ հստակ ցույց են տվել, որ իրենց վարկանիշը շատ կտրուկ անկում է ունեցել: Սրա մասին նաեւ Փաշինյանին պարբերաբար մարզեր «գործուղված» իր թիմակիցներն են զեկուցել: Այսինքն՝ ՔՊ-ականների այցերը տարբեր մարզեր արդյունք չեն տվել ու չեն արդարացրել հույսերը: Դե իսկ մայրաքաղաք Երեւանում իրավիճակն ավելի հուսադրող չէ իշխանության համար: «Ժողովուրդ» օրաթերթը տեղեկացավ, որ հենց այս է եղել նաեւ պատճառը, որ վերջին շրջանում իշխանությունները նաեւ հետ են կանգնել արտահերթ ընտրությունների մտքից, քանի որ այս անգամ վարչական ռեսուրսն էլ անգամ կարող է չօգնել իրենց:

ՀՀ վարչապետի աշխատակազմը 16 մլն 755 հազար դրամի պայմանագիր է կնքել «ԱՄ Փարթնըրզ Քոնսալթինգ Քամփնի» ՍՊԸ-ի հետ՝ հանրության շրջանում պետության եւ պետականության վերաբերյալ ընկալումների մասին հետազոտության համար: Պայմանագրի նկարագրության հատվածից հասկանում ենք, որ հետազոտությունն արվում է ՀՀ քաղաքացիների՝ պետության վերաբերյալ ընկալումների, դիրքորոշումների վերլուծության, ռիսկերի գնահատման եւ կառավարման համար: Նկատենք, որ Նիկոլ Փաշինյանի պաշտոնավարմանը մնացել է 730 օր՝ գրեթե 2 տարի, եւ վարչապետին անհանգստացնում է սեփական աթոռից հեռանալու հանգամանքը: Բանն այն է, որ նա տեղյակ է իր ընկած եւ հողին հավասարվող ռեյտինգի մասին, եւ եթե անգամ որոշակի ձայներ հավաքի, միեւնույնն է, չի կառավարելու: Նրա աշխատանքի եւ անձի հանդեպ անվստահությունը հատել է թույլատրելի սահմանը: Փաշինյանը եւ նրա իշխանությունը փորձում են երկարաձգել սեփական կառավարման ժամանակահատվածը, ինչը, «ցավոք», դժվար թե ստացվի: Հենց այս կասկածն է նրան ստիպել, որ սեփական անձի մասին հետազոտություն իրականացվի, որին պետք է մասնակցի 1200 քաղաքացի, իսկ հարցման վերջնաժամկետը նշանակված է մինչեւ 2024 թվականի հունիս: Հիշեցնենք, որ նախորդ տարեվերջին խոսակցություններ էին շրջանառվում, որ Նիկոլ Փաշինյանը փորձում է Հայաստանը տանել դեպի նոր խորհրդարանական ընտրություններ, սակայն վախը, որ չի արժանանա հանրության քվեին, նրան հետ պահեց այդ քայլից:

Դատավոր Ռուբիկ Մխիթարյանի գրեթե ողջ ընտանիքը արդարադատական համակարգում է: Դժվար է ասել՝ դատավոր Ռուբեն Մխիթարյանն է արդյոք նպաստել ընտանիքի նման հաջող կադրային դասավորությանը, թե նրա կինը, բայց «սքրինշոթ»-ների հերոսը իշխանություններից իրավամբ դժգոհելու առիթ չունի: Նրա կինը՝ Ալիսա Մկրտչյանը, Սնանկության դատարանում է աշխատում, դուստրը՝ Ռուբինա Մխիթարյանը՝ Արդարադատության նախարարությունում, իսկ վերոնշյալ անձանց հայտարարագրերում եկամուտները արտացոլված են անվերջ դրամական նվերներով: Ըստ ամենայնի, դատավոր Մխիթարյանի համար «ապագա կա»-ն վաղուց լուծված հարց է:

ԶՐՈՒՅՑ

ՖՐԱՆՍԻԱՆ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՌԱՆՑՔԱՅԻՆ ԳՈՐԾԸՆԿԵՐԸ

Ֆրանսիայի Ազգային ժողովի Ֆրանսիա-Հայաստան բարեկամական խմբի նախագահ Անն-Լորանս Պետելը կարծում է, որ Ֆրանսիան անելիք ունի Հայաստանի պաշտպանունակությունը եւ ինքնիշխանությունն ամրապնդելու հարցում: Նրա խոսքով՝ Ֆրանսիան դարձել է Հայաստանի առանցքային գործընկերը պաշտպանության ոլորտում, ինչը երկրին թույլ է տալիս Հայաստանին հավասարակշռել հարաբերությունները իր ագրեսիվ հարեւանի՝ Ադրբեջանի հետ:

Անն-Լորանս Պետելը խոսել է ԼՂ հակամարտությունը կարգավորելու ուղղությամբ Ֆրանսիայի անելիքների, պաշտպանության, տնտեսության եւ մշակույթի ոլորտներում երկու երկրների համագործակցության հեռանկարների, Ֆրանսիայի Սենատի կողմից ընդունված բանաձեւի մասին, որը դատապարտում է Հայաստանի դեմ Ադրբեջանի ագրեսիան եւ Ադրբեջանին կոչ է անում ապահովել ԼՂ-ից բռնի տեղահանվածների վերադարձը՝ երաշխավորելով համապատասխան պայմաններ նրանց անվտանգության եւ բարեկեցության համար:

-Որպես Ֆրանսիայի խորհրդարանում Հայաստանի հետ բարեկամության խմբի ղեկավար առաջին անգամ եք այցելում Հայաստան: Ի՞նչ օրակարգով եք այցելել մեր երկիր:

-Սա իմ չորրորդ, գուցե, նույնիսկ հինգերորդ այցն է Հայաստան: Այս անգամ Հայաստանի հետ բարեկամության խմբի պատվիրակության այցն է, ուստի ես առաջին անգամ եմ այցելում Հայաստան՝ որպես բարեկամության խմբի նախագահ: Մեր պատվիրակության կազմում տարբեր համոզմունքների եւ տարբեր խմբակցությունների պատգամավորներ են ընդգրկված: Մենք ունենք բազմակուսակցական պատվիրակություն, ինչն արտացոլում է բոլոր քաղաքական կուսակցությունների կողմից Հայաստանին աջակցելու կոնսենսուսը:

-Հունվարին Ֆրանսիայի խորհրդարանը Լեռնային Ղարաբաղի դեմ Ադրբեջանի ագրեսիան դատապարտող բանաձեւ ընդունեց, որը մի փոքր աննկատ մնաց: Կմանրամասնեք՝ ի՞նչ բովանդակություն ուներ բանաձեւը:

-Այո, իսկապես: Բանաձեւն ընդունվել է Ֆրանսիայի Սենատի կողմից: Այն կոչ է անում Ադրբեջանին ապահովել Լեռնային Ղարաբաղի բնակչության վերադարձի իրավունքը՝ երաշխավորելով այնպիսի պայմաններ, որոնք կապահովեն նրանց անվտանգությունն ու բարեկեցությունը: Բացի այդ, այն դատապարտում է Ադրբեջանի կողմից Հայաստանի տարածքների օկուպացիան եւ Ադրբեջանին կոչ է անում դուրս բերել ադրբեջանական զինված ուժերը Հայաստանի տարածքից:

-Նաեւ Ադրբեջանի դեմ պատժամիջոցներ կիրառելու կոչ է արվում:

-Այո, նաեւ կոչ է անում պատժամիջոցներ կիրառել:

ՕՐԵՆՔՈՎ ԱՐԳԵԼՎԱԾ Է

ՍՊԱՌՆԱԼԻՔԻ ՏԱԿ ՉԻ ԱՐՎՈՒՄ

«Ես առաջարկում եմ, որ եթե հնարավոր է վազող տողով, կամիր գունով գրենք, որ ՀՀ-ում որեւիցե մեկն օրենքով իրավունք չունի որեւիցե բան հանձնի, դա օրենքով արգելված է, երկրորդը՝ ՀՀ իշխանությունը որեւիցե պարագայում ՀՀ որեւիցե տարածք, չի պատրաստվում նույնիսկ քննարկել նման բան»,- Հանրային հեռուստաընկերության եթերում ասել է ՀՀ ԱԺ նախագահ Ալեն Սիմոնյանը՝ անդրադառնալով Տավուշում 4 գյուղերի տարածքների հանձնման թեմային:

«Երրորդը դրա օրինակը մենք ունենք, երբ որ խոսք էր գնում Ջանգեզուրի միջանցք կոչվածի մասին: Մենք հստակ ասացինք, որ եթե ինչ-որ պարագայում մեզ ինչ-որ բան պարտադրվի, մենք կռվելու ենք դրա համար, մենք կռվելու ենք մինչեւ վերջ: Եւ այսօր այն խոսակցությունները, որոնք կան, դրանք ստոր շահարկումներ են, որովհետեւ նույնիսկ այս պարագայում, երբ որ մենք ասում ենք, այո, վտանգը կա, որ մենք ասում ենք բավականին վերջերս պատերազմական առումով անհաջողություն ենք կրել, եթե մեզ պարտադրվի որեւէ բան, հայաստանյան իշխանության պատասխանը միակն է՝ մենք կռվելու ենք, եւ եթե մենք պարտվենք, իրենք դա վերցնեն, միեւնույնն է, մենք դա անելու ենք կռվով: Եւ որեւիցե մեկը, որեւիցե բան ՀՀ տարածքից ո՛չ կարող է, ոչ՛ պատրաստվում է, ո՛չ էլ պատրաստ է քննարկել»,-ասել է նա:

Ալեն Սիմոնյանը նաեւ իր հետ բերել էր քարտեզ, որում երեւում էր, թե Տավուշի մարզի սահմանամերձ շրջաններում որտեղ է ՀՀ- Ադրբեջան սահմանագիծը անցնում ըստ Ալմաթիի հռչակագրի:

«Էն գյուղերը, որոնք նշում է Ադրբեջանը դրանք են՝ Բաղանիս- Այրում, Աշըղ-Ասքիպարա, Խեյրումլի եւ Կըզըլ Հաջիլի, ընդ որում, այս վերջինը հիմա իրենց մոտ է: Ամբողջ տրամաբանությունը այն է, որ ասում են՝ Ոսկեպարը հանձնում են, ինչ Ոսկեպարի մասին է խոսքը, էդ անգրագետ պնդումները, որոնք կան, կա՛մ անգիրագիտությունից են արվում, կա՛մ սադրելու համար են արվում, Հայաստանում ներքաղաքական պրոցես սկսելու: Էս խոսակցությունը նրա մասին է, որ մենք պատրաստ ենք էս կտորում անել դեմարկացիա՝ մերը ինչ մերն է, մնալու է մերը, ինչը իրենց է, թող մնա իրենց: Այստեղ նաեւ հարց են բարձրացնում կոմունիկացիաներ մասին, այս տարածքում գազատար չկա: Կա ճանապարհի մի կտոր, որ երբ որ այդ խոսակցությունը գա հասնի, որ հասկանանք ճանապարհի այդ կտորը ինչ ենք անելու, մեր դիրքորոշումն այն է, որ մենք մեր ճանապարհը մի քանի կիլոմետր կարող ենք էս կողմով սարքել»,-ասաց նա:

Հարցին թե, Հայաստանը սա անում է սպառնալիքի տակ, Ալեն Սիմոնյանն ասաց, որ դա սպառնալիքի տակ չի արվում, դա արվում է, որովհետեւ պետք է Հայաստանին:

«Երբ որ մենք ասում ենք՝ ՀՀ-ն կադաստրի վկայական ունենա, դա վերացական բան չի կարող լինել »,- նշում է նա:

Հարցին, որ եթե այս տարածքները հանձնվեն, Ադրբեջանը կճանաչի որ դա սահմանն է, ԱԺ նախագահը ասաց. «Բա ինչ պիտի անի, իհարկե, երբ որ ինքը ճանաչում է մեր սահմանը, ինքը դրանով ճանաչում է իր սահմանը, այստեղ Ադրբեջանի սահմանը կապված է նաեւ մեր ճանաչելով: Մենք չենք պատրաստվում որեւիցե բան զիջենք այն պայմանով, որ պատերազմ չլինի, որը մերն է, չի լինելու տենց բան, ամբողջ իշխանության անունից եմ հայտարարում, անհնար է: Երբ որ մենք պատերազմում ենք մեր տարածքում, ամբողջ աշխարհը պատրաստ է պաշտպանելու մեզ, երբ որ մենք պատերազմում ենք այն տարածքում, որը ընկալվում է այլ տարածք, ամբողջ աշխարհը լռում է»:

ՈՐՏԵՂԻ՞Ց ԱՅՍ ԹԵՄԱՆ

«Հայաստանի իշխանությունների որոշ ներկայացուցիչների հայտարարությունները, թե իբր Ռուսաստանը ստիպում է Հայաստանին անդամակցել Ռուսաստանի Դաշնության եւ Բելառուսի միութենական պետությանը, չեն համապատասխանում իրականությանը»,- 24News պորտալին տված հարցազրույցում ասել է ՌԴ դեսպան Սերգեյ Կոպիրկինը:

«Ես ինքս այս հարցը տալիս եմ՝ որտեղի՞ց այս թեման: Այստեղ կան հասարակական կազմակերպություններ, քաղաքական ուժեր, որոնք քարոզում են այս գործընթացը, բայց այս դեպքում նրանք կապ չունեն մեր միջպետական հարաբերությունների, մեր քաղաքական երկխոսության հետ: Որպես մարդ, որպես ռուս, որպես դեսպան, ես դրա նկատմամբ համակրանք ունեմ, բայց չգիտեմ, որ այս հարցը երբեւէ բարձրացվել է որպես մեր քաղաքական երկխոսության եւ քննարկման առարկա»,- ասաց նա:

Կոպիրկինը հավելեց, որ Հայաստան-Ռուսաստան հարաբերությունները դառնում են ավելի լայն առճակատման առարկա. ԱՄՆ-ն բացահայտ ասում է, որ Հայաստանի հետ հարաբերությունները դիտարկում է հենց Ռուսաստանի եւ Իրանի հետ առճակատման համատեքստում:

«Սա շատ վատ է, շատ վտանգավոր է, իսկապես կարող է իրական վնաս հասցնել մեր հարաբերություններին, եթե հայկական կողմից բավարար քաղաքական կամք չլինի՝ պաշտպանելու մեր հարաբերությունների ողջ զանգվածը, ինչը շատ կարեւոր է հասարակ մարդկանց համար»,- նշել է նա:

ԷՖԵՆԴԻՆ ԱՐԳԵԼԵԼ Է

«Նեղացկոտ էֆենդին արգելել է «Երեկոն Վլադիմիր Սոլովյովի հետ» հաղորդաշարի հեռարձակումը Հայաստանում»,- սոցցանցերում գրել է ռուս լրագրող Մարգարիտա Սիմոնյանը:

«Եվ ինչպես էր նա շնչում, ինչպես էր շնչում: Նա իշխանության եկավ «խոսքի ավելի շատ ազատություն» կարգախոսներով: Ավելի քիչ խոսքի ազատություն կա: Իսկ Ղարաբաղի հետ անհարմար ստացվեց: Ինչու՞ բոլոր ազատասերները, երբ գալիս են իշխանության, պարզվում են բռնապետ ու չարաշահող: Առեղծված է»,- գրել է նա:

Նշենք, որ Հայաստանում արգելափակվել է «Երեկո Վլադիմիր Սոլովյովի հետ» եւ «Կիրակնօրյա երեկո Վլադիմիր Սոլովյովի հետ» հաղորդումների հեռարձակումը:

ՀԱՆՐԱՀԱՎԱՔՆԵՐ ԿԼԻՆԵՆ

Ընդդիմադիր տարբեր քաղաքական ուժեր պատրաստվում են ապրիլից վերսկսել փողոցային պայքարը՝ իշխանության հեռացման պահանջով ակցիաներ եւ հանրահավաքներ կլինեն:

ArmLur.am-ը գրել էր, որ խորհրդարանական ընդդիմությունն է պատրաստվում ակցիաներ իրականացնել:

Տեղեկացանք, որ Սուրեն Սուրենյանցի «Դեմոկրատական այլընտրանք» կուսակցությունը եւս հանրահավաքներ եւ ակցիաներ է պատրաստվում իրականացնել:

Ապրիլի 6-ի հանրահավաքը մեր պայքարի մեկնարկն է:

ArmLur.am-ի հետ զրույցում կուսակցության նախագահ Սուրեն Սուրենյանցն ասաց, որ նպատակը խորհրդարանական նոր ընտրությունների գնալն է՝առանց Նիկոլ Փաշինյանի մասնակցության.

«Գործընթաց ենք մեկնարկում, որի արդյունքում նպատակ ունենք հասնել հանրային այնպիսի գիտակցության, որ տեղի ունենան ԱԺ ընտրություններ՝առաց Փաշինյանի մասնակցության»,-ասաց նա:

Սուրենյանցի խոսքով՝ իրենք ընտրել են ցանցային պայքարի տարբերակը.

«Ի տարբերություն փորձարկված ու ձախողված պայքարի մյուս տարբերակների՝ մենք որոշել ենք փոքր հանրահավաքներով հասնել մեծ հանրահավաքների:

Ակցիաներ կլինեն Երեւանի տարբեր վարչական շրջաններում, մարզերում: 1.5-2 ամիս փոքր ակցիաներ կլինեն, հետո արդեն մեծ հավաքներ»,-ասաց նա:

ԻՐԵՆՔ ԻՆՉ ԳԻՏԵՆ

ՀՀ ԱԺ նախագահ Ալեն Սիմոնյանն անդրադարձել է հայ-ռուսական հարաբերությունների ներկայիս վիճակին: Հանրայինի եթերում Սիմոնյանն արձագանքել է ՌԴ ԱԳՆ պաշտոնական ներկայացուցիչ Մարիա Զախարովայի այն խոսքերին, որ Հայաստանը վերածվել է Արեւմուտքի վտանգավոր գործիքի:

«Ինչո՞ւ Ռուսաստանը նույն խանդավառությամբ չի մեկնաբանում ադրբաջանական կողմին, օրինակ՝ Ալիեւ-Ջելենսկի հանդիպումը, բազմամիլիոնավոր դոլարների օգնությունն Ուկրաինային եւ այլն:

Իրենք ինչ գիտեն, որն է հայ ժողովրդի հիմնարար շահը: Մեզ համար դա անկախ, անվտանգ երկիրն է, որը փորձում ենք ստեղծել եւ պնդացնել, որովհետեւ 90-ականներից հետո այն անկախությունը չի եղել, որի համար պայքարել ենք: Դա եղել է թվացյալ, կիսակախյալ վիճակ մինչ օրս»,- ասել է նա:

Ալեն Սիմոնյանն ընդգծել է, որ որեւէ մեկը ՌԴ դեմ ոչինչ չի անում: «Մենք ունեինք ընկեր, ավագ եղբայր, դաշնակից, որը պետք է մեզ պաշտպաներ: Ժամանակը եկավ, մեզ չպաշտպանեց, մեզ թողեց մենակ:

Հետո էլի հավատացինք, որ կպաշտպանի, բայց մեզ էլի խաբեցին, խաբեցին եւ փորձեցին ներքաշել նոր պատերազմի մեջ արդեն ՀՀ տարածքում, որպեսզի գան եւ փրկեն կոնկրետ իրավիճակում՝ օղակ գցելով հայ ժողովրդի եւ պետականության վրա:

Ասում են՝ Արեւմուտքի ձեռքով տարածաշրջանից հեռացնում ենք Ռուսաստանը, թող գան իրենց ձեռքով պաշտպանեն Հայաստանը: Եկան, մենք դե՞մ եղանք: Խծաբերդում կային ռուս զինվորներ, ԼՂ-ում կային խաղաղապահներ, եկան, տեսանք, քանի՞ անգամ պիտի նույն սխալն անենք, չունենք այդքան ռեսուրս»,- ասել է Ալեն Սիմոնյանը:

ՀԱՅԱՍՏԱՆ-ԿՈՐԵԱ

ԵՐԿԿՈՂՄ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ

Երեւանում մարտի 28-ին կայացել են Հայաստանի Հանրապետության եւ Կորեայի Հանրապետության արտաքին գործերի նախարարությունների միջեւ 5-րդ քաղաքական խորհրդակցությունները՝ Հայաստանի Հանրապետության ԱԳ նախարարի տեղակալ Մնացական Սաֆարյանի եւ Կորեայի Հանրապետության ԱԳ նախարարի քաղաքական հարցերով տեղակալ Չոն Քյուն Վոնի գլխավորությամբ:

Այս մասին հայտնում են Հայաստանի ԱԳ նախարարությունից:

Կողմերը քննարկել են երկկողմ համագործակցության հեռանկարները՝ երկուստեք պատրաստակամություն հայտնելով զարգացնել առկա քաղաքական երկխոսությունը եւ տնտեսական կապերը: Հանդիպման ընթացքում անդրադարձ է կատարվել երկկողմ օրակարգին վերաբերող հարցերի լայն շրջանակին, մասնավորապես՝ միջուկային էներգետիկայի ոլորտում հնարավոր համագործակցությանը, իրավապայմանագրային դաշտի ընդլայնմանը, կրթական եւ մշակութային փոխանակումներին: Անդրադարձ է կատարվել նաեւ զբոսաշրջության, տեղեկատվական տեխնոլոգիաների, թվայնացման, արհեստական բանականության եւ նորարարությունների ոլորտներում համագործակցության հեռանկարներին, պետական կառավարման ոլորտներում փորձի փոխանակմանը, ինչպես նաեւ Հայաստանում Կորեայի միջազգային համագործակցության գործակալության (KOICA) միջոցով իրականացվող ծրագրերին:

Խորհրդակցությունների ընթացքում կողմերն անդրադարձ են կատարել նաեւ միջազգային կազմակերպություններում եւ այլ բազմակողմ հարթակներում առկա համագործակցությանը, կայուն զարգացման նպատակների, մարդու իրավունքների եւ ժողովրդավարական արժեքների ամրապնդման ուղղությամբ գործադրվող ջանքերին:

ՀՀ ԱԳ նախարարի տեղակալ Մնացական Սաֆարյանը զրուցակցին հանգամանալից ներկայացրել է տարածաշրջանում ստեղծված անվտանգային իրադրությունը եւ տեւական խաղաղության հաստատմանն ուղղված Հայաստանի ջանքերը, Ադրբեջանի կողմից էթնիկ զտման հետեւանքով Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված հայերի հումանիտար խնդիրների հասցեագրման ուղղությամբ ՀՀ կառավարության ձեռնարկած միջոցառումները՝ կարեւորելով նաեւ այս ուղղությամբ միջազգային գործընկերների աջակցությունը:

Այցի շրջանակներում պատվիրակությանն ընդունել է նաեւ ՀՀ արտաքին գործերի նախարար Արարատ Միրզոյանը, որի հետ հանդիպմանը եւս անդրադարձ է կատարվել հայ-կորեական հարաբերությունների երկկողմ եւ բազմակողմ օրակարգի մի շարք հարցերի, տարածաշրջանային զարգացումներին:

ՍՈՆԱ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՕՐՎԱ ԽՃԱՆԿԱՐ

ՀԱՆԴԻՊԵԼ ԵՆ

Էկոնոմիկայի նախարար Գեւորգ Պապոյանը մարտի 28-ին ընդունել է Կորեայի Հանրապետության արտաքին գործերի նախարարի քաղաքական հարցերով տեղակալ Չուն Բյունվոնի գլխավորած պատվիրակությանը՝ հայ-կորեական տնտեսական համագործակցության հեռանկարները քննարկելու նպատակով: Ինչպես տեղեկացանք էկոնոմիկայի նախարարությունից, հանդիպմանը ներկա է եղել նաեւ նախարարի տեղակալ Ռաֆայել Գեւորգյանը:

Քննարկվել են համագործակցության հնարավորությունները շրջակա միջավայրի պահպանության եւ վերականգնվող էներգետիկայի, մասնավորապես՝ թափոնների կառավարման, պլաստիկի վերամշակման, քամու, արեւային էներգիայի արտադրության եւ կանաչ տնտեսության ուղղությամբ:

Գեւորգ Պապոյանը ներկայացրել է Հայաստանի ներդրումային հնարավորություններն ու ոլորտում իրականացվող բարեփոխումները, ինչպես նաեւ տնտեսության ոլորտում կառավարության կողմից իրականացվող քաղաքականությունն ու առաջնահերթությունները՝ ընդգծելով տնտեսության դիվերսիֆիկացիայի կարեւորությունը եւ, հատկապես, ամրագրել այդ շրջանակներում համագործակցության խորացումը Կորեայի հետ:

Գեւորգ Պապոյանն անդրադարձել է նաեւ «Խաղաղության խաչմերուկ» նախաձեռնությանը:

Հանդիպման ընթացքում կողմերը կարեւորել են Հայաստանի — Կորեայի միջեւ համագործակցության զարգացումն ու խորացումը եւ պատրաստակամություն հայտնել ակտիվ ջանքեր գործադրել նոր նախաձեռնություններ եւ ծրագրեր կյանքի կոչելու ուղղությամբ:

ՊԱՏՐԱՍՏ Է ՆՊԱՍՏԵԼՈՒ

Ռուսաստանի Դաշնության արտաքին գործերի նախարար Սերգեյ Լավրովը հայտարարել է, որ Հայաստանը ծանոթ է Մոսկվայի տեսակետին եւ գիտի՝ ռուսական կողմը պատրաստ է նպաստել Ադրբեջանի հետ հարաբերությունների կարգավորմանը:

Այս մասին հայտնում են ռուսական լրատվամիջոցները՝ մեջբերելով նրա խոսքերն «Իզվեստիա»-ին տված հարցազրույցում:

«Մենք Հայաստանի ղեկավարությանն ազնվորեն հայտնել ենք մեր բոլոր գնահատականները, նրանք շատ լավ գիտեն, որ մենք հավատարիմ ենք մնում մեր պարտավորություններին, որ պատրաստ ենք շարունակել նպաստել Ադրբեջանի հետ իրենց (խմբ? Հայաստան) հարաբերությունների կարգավորմանը, եւ լիարժեք ավարտին հասցնել այս գործընթացը: Նրանք գիտեն, որ իրավիճակի կայունացման, Երեւանի եւ Բաքվի միջեւ հարաբերությունների վերականգնման մեր անկեղծ շահագրգռվածության ֆոնին Եվրամիությունը եւ ՆԱՏՕ-ն այս գործընթացը բարդացնելու համար քայլեր են ձեռնարկում»,- նշել է Լավրովը:

ՌԴ արտգործնախարարը հավելել է, որ հայկական իշխանությունները վերջին շրջանում ռուսական կողմի հետ կապի դուրս չեն եկել, իսկ ինքը Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարար Արարատ Միրզոյանի հետ վերջին անգամ շփվել է 2023 թվականի նոյեմբերին:

«Վերջերս Ադրբեջանի ղեկավարությունն իր բողոքը հայտնեց որոշ գործողությունների եւ հայտարարությունների դեմ, այդ թվում՝ կապված Հայաստանում ԵՄ առաքելության գործառույթների եւ կազմի ընդլայնման հետ: Դա նրանց (Հայաստան) որոշելիքն է»,- եզրափակել է ՌԴ ԱԳ նախարարը:

ԿԻՐԱՌՎԵԼ Է ԿԱԼԱՆԱՎՈՐՈՒՄ

ԲԱԶՄԱԹԻՎ ԿՐԱԿՈՑՆԵՐ Է ԱՐՁԱԿԵԼ

Ավարտվել է Եղեգնաձոր քաղաքի Շահումյան փողոցում նույն քաղաքի 32-ամյա բնակչի կողմից զենքի գործադրմամբ խուլիգանության, աղօրինի կերպով հրազեն ձեռք բերելու, պահելու եւ կրելու, այլ անձանց կյանքի համար վտանգավոր եղանակով սպանության փորձ կատարելու, խոշոր չափերով թմրամիջոց պարունակող բույսեր աճեցնելու դեպքերի առթիվ նախաձեռնված քրեական վարույթի նախաքննությունը:

ՀՀ քննչական կոմիտեի Վայոց ձորի մարզային քննչական վարչությունում իրականացված բազմակողմանի քննությամբ պարզվել եւ հիմնավորվել է, որ 2023թ. մայիսի 6-ին՝ ժամը 22:00-ի սահմաններում, Եղեգնաձոր քաղաքի 32-ամյա բնակիչը նույն քաղաքի Ավագյան փողոցում գտնվող ավտոլվացման կետի հարակից տարածքում, իրավական եւ բարոյական նորմերի նկատմամբ բացահայտ արհամարհական վերաբերմունք ցուցաբերելով, բարձրաձայն հայհոյանքներ է հնչեցրել «ՎԱԶ-2107» մակնիշի ավտոմեքենայի վարորդի հասցեին՝միաժամանակ սպառնալով վնասել նրա ավտոմեքենան՝ Եղեգնաձոր քաղաքի Բաղրամյան փողոցով արագ երթեւեկելու պատճառով: Այնուհետեւ չընդունելով հայհոյանքներ հնչեցնելու համար ավտոլվացման կետի սեփականատիրոջ կողմից տեղին արված դիտողությունը՝Եղեգնաձոր քաղաքի Շահումյան, Խանջյան, Բաղրամյան փողոցների խաչմերուկում, իր անձի առավելությունն ընդգծելու մոլուցքով տարված, շարունակել է հայհոյանքներով խախտել մարդկանց անդորրը:

Դրանից կարճ ժամանակ անց՝ 23:55-ի սահմաններում, նշված հատվածով երթեւեկելու ընթացքում նկատելով ավտոլվացման կետի լույսերը՝«Մերսեդես» մակնիշի ավտոմեքենայի վարորդից պահանջել է մեքենան կայանել ավտոլվացման կետին հարակից ճանապարհահատվածում, ապա՝նախքան մեքենայից իջնելը, վերցրել է ապօրինի ձեռք բերված եւ առանց հիշյալ ավտոմեքենայի վարորդին զգուշացնելու, նույն ավտոմեքենայի մեջ պահված «АКМ» տեսակի լիցքավորված մարտական հրազենը, այլ անձանց կյանքի համար վտանգավոր եղանակով, վերոնշյալ փողոցների խաչմերուկում բազմաթիվ կրակոցներ է արձակել ավտոտեխսպասարկման կետի ուղղությամբ, սակայն իր կամքից անկախ հանգամանքներով, հանցագործությունն ավարտին չի հասցրել:

Բացի այդ, պարզվել է, որ 32-ամյա տղամարդը, Եղեգնաձոր քաղաքում գտնվող իր առանձնատան բակում ցանել եւ աճեցրել է շրջանառությունն արգելված «Տետրահիդրոկանաբինոլ» տեսակի թմրամիջոց պարունակող, «Կանեփ» տեսակի 26 ամբողջական բույս, որոնք հայտնաբերվել եւ վերցվել են նրա բնակարանում եւ դրա օժանդակ մասերում կատարված խուզարկության ժամանակ:

Ձեռք բերված բավարար փաստերի հիման վրա՝ Եղեգնաձոր քաղաքի 32-ամյա բնակչին մեղադրանք է ներկայացվել՝ ՀՀ քրեական օրենսգրքի 297-րդ հոդվածի 1-ին մասով, 44-155-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ կետով եւ 335-րդ հոդվածի 1-ին մասով: Նրա նկատմամբ որպես խափանման միջոց է կիրառվել կալանավորումը:

Նախաքննությունն ավարտվել է: Քրեական վարույթի նյութերը, մեղադրական եզրակացությամբ, ուղարկվել են հսկող դատախազին՝ հաստատելու եւ դատարան ուղարկելու համար:

Ծանուցում. հանցանքի համար մեղադրվողը համարվում է անմեղ, քանի դեռ նրա մեղավորությունն ապացուցված չէ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով՝դատարանի՝օրինական ուժի մեջ մտած դատավճռով:

ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ՆԱԽԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԱՎԱՐՏ

ԻՆՔՆԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԵՆ ՀԱՍՑՐԵԼ

Ավարտվել է զինծառայող Ժորա Կարապետյանին ինքնասպանության հասցնելու դեպքի առթիվ նախաձեռնված քրեական վարույթի նախաքննությունը: Այդ մասին հայտնում են ՀՀ ՔԿ-ից:

«ՀՀ քննչական կոմիտեի զինվորական քննչական գլխավոր վարչության ութերորդ կայազորային քննչական բաժնում իրականացված վարութային եւ ապացուցողական մեծածավալ գործողությունների արդյունքում պարզվել են դեպքի հանգամանքները, այդ թվում՝ շարժառիթը, ինչպես նաեւ ենթադրյալ հանցագործություն կատարած երկու անձանց ինքնությունը, ովքեր տուժողի ծառայակիցներն են: Մասնավորապես, 2023 թ. օգոստոսի 10-ին՝ ժամը 18:50-ի սահմաններում, ՀՀ ՊՆ N զորամասի պահպանության շրջանի մարտական դիրքում նույն զորամասի ժամկետային զինծառայող Ժորա Կարապետյանը, լինելով ազատ հերթափոխում, այլ զինծառայողին ամրակցված ինքնաձիգով կատարել էր ինքնասպանության փորձ: Դեպքից անմիջապես հետո նրան տեղափոխել էին հոսպիտալ, որտեղ, սակայն, հաջորդ օրը՝ ժամը 04:30-ի սահմաններում, մահացել է: Դեպքի առթիվ զինծառայողին ինքնասպանության հասցնելու հատկանիշներով նախաձեռնված քրեական վարույթի շրջանակներում ձեռնարկված անհետաձգելի միջոցառումներով հավաքված ապացույցներով պարզվել եւ հիմնավորվել է, որ նույն զորամասի պարտադիր ժամկետային երկու զինծառայողների եւ Ժորա Կարապետյանի միջեւ, մարտական դիրքում ծառայություն կրելու ընթացքում, ձեւավորվել են միջանձնային անառողջ հարաբերություններ: Քննությամբ ստացված փաստական տվյալների համաձայն՝զինծառայողն ինքնասպանությունը գործել էր համածառայակիցների կողմից իր նկատմամբ ոչ կանոնադրական հարաբերություններին բնորոշ վարքագծի դրսեւորման պատճառով:

Համածառայակիցների ներկայությամբ լինելով հոգեբանորեն ընկճված եւ անելանելի վիճակում՝Ժորա Կարապետյանը, 2023 թ. օգոստոսի 10-ին՝ ժամը 18:50-ի սահմաններում, ՀՀ ՊՆ N զորամասի պահպանության մարտական դիրքում, իր պարտականությունները կատարելու ժամանակ, նույն դիրքի ավագ, պարտադիր ժամկետային զինծառայող, շարքային զինծառայողին ամրակցված «АК-103» տեսակի ինքնաձիգով գլխի շրջանում արձակել էր կրակահերթ եւ ինքն իրեն պատճառել կյանքի հետ անհամատեղելի հրազենային վնասվածքներ:

Ձեռք բերված փաստերի հիման վրա՝ ՀՀ քրեական օրենսգրքի 522-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին եւ 3-րդ կետերով մեղադրանքներ են ներկայացվել նրա երկու համածառայակիցներին:

Որպես խափանման միջոց՝ վերջիններիս նկատմամբ ընտրվել էր կալանավորումը:

Նախաքննությունն ավարտվել է, եւ վարույթի նյութերը, մեղադրական եզրակացությամբ, ուղարկվել են դատարան»,- նշված է հաղորդագրության մեջ:

ԻՐԱՎՈՒՆՔ

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Վերաքննիչ քրեական դատարանի դատավոր Վազգեն Ռշտունին հայտարարություն է տարածել, որում մասնավորապես ասվում է. «Ցանկանում եմ իրազեկել, որ վերջին օրերին տեղի են ունեցել որոշակի իրադարձություններ, որոնցով պայմանավորված դժվարին որոշում եմ կայացրել այս պահին չհավակնել Բարձրագույն դատական խորհրդի դատավոր անդամի թափուր տեղին:

Ինձ համար մեծագույն պատիվ կլիներ դատավորներին տվյալ մարմնում ներկայացնելը, սակայն նժարին դրված էին իմ անձի հետ առնչություն չունեցող հարցեր, որոնք իմ գնահատմամբ ավելի կարեւոր են, քան Բարձրագույն դատական խորհրդի անդամ դառնալը. հակառակ մոտեցումը կարող էր գնահատվել եսասիրական:

Հայցում եմ բոլոր դատավորների ներողամտությունը, հատկապես նրանց, ովքեր իմ՝ Բարձրագույն դատական խորհրդի անդամ դառնալու հետ կապված ունեցել են դրական սպասումներ: Շնորհակալություն եմ ուզում հայտնել Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովին՝բարեվարքության վերաբերյալ դրական եզրակացություն տալու համար: Հատուկ շնորհակալություն եմ ուզում հայտնել այն դատավորներին, ովքեր, ունենալով բազմամյա փորձ եւ խորը մասնագիտական գիտելիքներ, իմ անձը հաշվի առնելով որոշել են իրենց թեկնածությունները չառաջադրել: Հուսով եմ կայացված որոշումը խոչընդոտ չի հանդիսանա՝ ինձ ձեզանից մեկը համարելու, միասնական լինելու եւ մեկս մյուսին սատար կանգնելու հարցում: Լիահույս եմ, որ առաջիկայում կայանալիք ընտրություններին կընտրենք արժանիին»:

ՀԵՏԵՎՈՂԱԿԱՆ ԿԼԻՆԻ

ԱԺ մարդու իրավունքների պաշտպանության եւ հանրային հարցերի մշտական հանձնաժողովի՝ ապօրինաբար լիազորությունները դադարեցված նախագահ, անկուսակցական պատգամավոր Թագուհի Թովմասյանը սոցցանցի իր էջում գրում է. «ՀՀ դատախազությունից տեղեկացրեցին, որ իմ դիմումի հիման վրա քրեական վարույթ է նախաձեռնվել «Իմնեմնիմի» պոդքաստի վարող Նարեկ Սամսոնյանի բռնի ձերբակալության առիթով դիմում էի ուղարկել ՀՀ գլխավոր դատախազ Աննա Վարդապետյանին՝ պահանջելով քրեաիրավական գնահատական տալ արժանապատվության նսեմացման կադրերով եւ բռնությամբ ուղեկցված ձերբակալության գործընթացին: Այսօր ստացել եմ պատասխան գրություն, որ դատախազության պետական իշխանության դեմ ուղղված հանցագործությունների գործերով վարչության պետն իմ դիմումը հասցեագրել է ՀՀ ՔԿ ՀԿԳ քննության գլխավոր վարչության խոշտանգումների եւ պաշտոնատար անձանց կողմից բռնություն գործադրելո լիազորությունները չարաշահելու կամ անցնելու հանցագործությունների վարչության պետ Յու. Իվանյանին: Դատախազությունը քննչական կոմիտեի քննարկմանն է ուղարկել իմ գրությունը՝ «Քրեական վարույթ նախաձեռնելու հարցը լուծելու համար»: ՀՀ դատախազությունից քիչ առաջ ինձ տեղեկացրին, որ իմ դիմումի հիման վրա ՀՀ քննչական կոմիտեում վարույթ է նախաձեռնվել Նարեկ Սամսոնյանի բռնի ձերբակալության առիթով: Հետեւողական կլինեմ մինչ գործի ավարտը, քանի որ պոդքաստի ընթացքում հնչեցրած ամենաանթույլատրելի բառն անգամ չի կարելի խուլիգանության հետ շփոթել եւ կալանավորել հաղորդավարներին՝ իբրեւ խուլիգանների, ավելին՝ կալանավորել այդքան բիրտ ուժի կիրառմամբ»:

● *Ըստ ոստիկանության տվյալների՝մարտի 28-ից մարտի 29-ը ՀՀ ՆԳՆ ոստիկանության ստորաբաժանումները բացահայտել են հանցագործության 80 դեպք, որից 2-ը՝նախկինում կատարված:*

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐԶ

ՉԵՆ ԿԱՐՈՂ ՀԱՆՁՆՎԵԼ

Նիկոլ Փաշինյանի դասընկեր, նրա հարսանիքի քավոր, Նիկոլ Փաշինյանի որոշմամբ 2021թ. ապրիլի 8-ին Տավուշի մարզպետ նշանակված Հայկ Ղալումյանը մարտի 26-ին մարզպետարանում ընդունել է Նոյեմբերյան համայնքի սահմանամերձ բնակավայրերի վարչական ղեկավարների: Հանդիպումը վերաբերել է նախկինում ադրբեջանաբնակ 4 գյուղերի տարածքները Ադրբեջանին հանձնմանը, Կիրանց-Ոսկեպար հատվածում նոր ճանապարհի կառուցմանը: Ընդ որում՝ մարզպետը որոշակի չի հայտնել, թե որ տեղանքով է ձգվելու սահմանագոտում կառուցվելիք այդ ճանապարհը: Մեր տեղեկություններով ՝ մարզպետը նույն խնդրով նման հանդիպում ունենալու է նաեւ Իջեւան համայնքի սահմանամերձ գյուղերի վարչական ղեկավարների հետ, այդ հարցով Նոյեմբերյան եւ Իջեւան խոշոր համայնքներից ձեւավորվելու են 5-հոգիանոց խմբեր: Սահմանամերձ գյուղերի վարչական ղեկավարների համոզմամբ՝ չնայած Նիկոլ Փաշինյանի նպատակին ու ջանքերին, վռազ-վռազ, միակողմանի կերպով Ադրբեջանին տարածքներ չեն կարող հանձնվել:

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՉԿԱՆ

Բարձրագույն կրթություն չունենալու պատճառով Տավուշի մարզի հանրակրթական դպրոցներում այս ուսումնական տարում աշխատանքից ազատվել է 55 ուսուցիչ, ինչն ավելացրել է մարզի դպրոցներում ուսուցիչների թափուր տեղերի թիվը: Հայաստանի մարզեր ուսուցիչների գործուղման վերաբերյալ kadrer.emis.am ինտերնետային կայքում տեղեկություններ կան Հայաստանի մարզերի հանրակրթական դպրոցներում տարբեր առարկաների ուսուցիչների թափուր տեղերի, այդ տեղերը զբաղեցնելու դեպքում ուսուցիչների աշխատավարձերի չափերի վերաբերյալ: Ըստ այդ կայքի՝ Տավուշի մարզի հանրակրթական դպրոցներում ուսուցչի 8 թափուր տեղեր կան, ֆիզկուլտուրայի ուսուցչի թափուր տեղեր կան Վարագավանի միջնակարգ, Բերդի թիվ 1 հիմնական (2 տեղ), Լուսահովտի հիմնական եւ Ակնաղբյուրի հիմնական դպրոցներում, անգլերենի ուսուցչի թափուր 2 տեղ կա Մովսեսի միջնակարգ դպրոցում, աշխարհագրության ուսուցչի թափուր հաստիք է առկա Գոշի թիվ 1 միջնակարգ դպրոցում: Տավուշի մարզպետ Հայկ Ղալումյանին տեղեկատվական հարցում ենք արել, թե ինչու մարզպետարանի ենթակայության ներքո գործող հանրակրթական դպրոցներում ուսուցիչների թափուր տեղերի վերաբերյալ հայտարարությունները չեն տեղադրվում մարզպետարանի ինտերնետային կայքում: Մարզպետարանից պատասխանել են. «Դպրոցում ուսուցչի թափուր տեղ առաջանալու դեպքում դպրոցը մարզպետի աշխատակազմ է ներկայացնում համապատասխան գրություն, որի հիման վրա Տավուշի մարզպետի աշխատակազմի ինտերնետային կայքում տեղադրվում է մրցույթի մասին հայտարարություն»:

ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ
Տավուշ

«ՍԱԼՈՄԵ»

ՊԱՐԳԵՎԱՏՐՎԵԼ ԵՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՊԱՏՎՈԳՐԵՐՈՎ

Վարդգես Սուրենյանցի «Սալոմե» հանրահայտ ստեղծագործության վերականգնող վարպետները պարգեւատրվել են ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարության պատվոգրերով:



Այս մասին հաղորդագրություն է տարածել ՀՀ ԿԳՄՍ նախարարությունը:

Վերականգնող մասնագետների շուրջ 5 տարվա ջանադիր աշխատանքից հետո օրեր առաջ Հայաստանի ազգային պատկերասրահում բացվել է հայտնի կտավի ցուցադրությունը:

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարար Ժաննա Անդրեասյանը Հայաստանի ազգային պատկերասրահում երեկ դիտել է Վարդգես Սուրենյանցի վերականգնված գլուխգործոցը, ծանոթացել վերականգնման աշխատանքների ընթացքը ներկայացնող էքսպոզիցիոն առաջին սրահի ցուցադրությանը, որտեղ վերարտադրված է վերականգնման արվեստանոցը՝ համապատասխան գործիքներով, օգտագործված նյութերով, աշխատանքային սեղանով, մանրադիտակով եւ ուլտրամանուշակագույն լամպ-նկարակալով: Այստեղ ներկայացված է նաեւ «Սալոմե» կտավի կրկնօրինակը, որը պատրաստվել է տեսողական խնդիրներ ունեցող մարդկանց համար:

Հայաստանի ազգային պատկերասրահի տնօրեն Մարինա Հակոբյանն ու վերականգնող մասնագետները պատմել են վերականգնման ընթացքի մասին՝ սկսած նախապատրաստական աշխատանքներից մինչեւ դրանց ավարտը՝ շեշտելով, որ Սուրենյանցի կտավի հետ աշխատելիս պատասխանտվությունը շատ մեծ է եղել. «Նախապատրաստական աշխատանքները բավական երկար տեւեցին. շուրջ երկու տարի ընթանում էին ուսումնասիրման գործընթացները»,- նշել են վերականգնող մասնագետները:

Նախարարը կտավը դիտել է՝ նշելով, որ շատ տպավորված է կատարած աշխատանքով եւ վերականգնված «Սալոմե»-ի ցուցադրության համար ընտրված ձեւաչափով. «Կատարվել է շատ կարեւոր աշխատանք, որը ցուցադրության այս ձեւաչափի շնորհիվ առանձնակի կարեւորվում է: Թանգարանում ստեղծվում է մի միջավայր, որը կարող է դիտարկվել նաեւ որպես մասնագիտական կողմնորոշման հատուկ եղանակ երեխաների համար, որոնք կարող են սրահ այցելելով պատկերացում կազմել վերականգնողի մասնագիտության մասին՝միաժամանակ արժեւորելով նաեւ արվեստի մեծարժեք գործը՝ «Սալոմե» կտավը, որը, անշուշտ, շատ հետաքրքիր է»,- ասել է Ժաննա Անդրեասյանը:

Նախարարը նաեւ տեղեկացրել է, որ ԿԳՄՍ նախարարության աշխատանքային սրահներից մեկում եւս տեղադրված է Վարդգես Սուրենյանցի «Սալոմե» ստեղծագործության կրկնօրինակը. «Մի տեսակ սովորություն է դարձել՝ աշխատանքային քննարկումների ժամանակ հաճախ եմ նայում այդ նկարին. ինչ-որ մոգական, ձգող ուժ ունի»:

Այցի ավարտին ՀՀ ԿԳՄՍ նախարար Ժաննա Անդրեասյանը եւ նախարարի տեղակալ Ալֆրեդ Քոչարյանը նախարարության պատվոգրեր են հանձնել Հայաստանի ազգային պատկերասրահի վերականգնման եւ կոնսերվացման բաժնի վարիչ Իգոր Պողոսյանին, նույն բաժնի մասնագետներ Տաթեւիկ Ամիրխանյանին եւ Արտաշես Աբրահամյանին՝ մշակութային արժեքների վերականգնման գործում նշանակալի ավանդի եւ երկարամյա աշխատանքային գործունեության համար:

«Մեծ ջանքեր ենք ներդրել ու շատ կարեւոր է, որ այդ ջանքերը նախեւառաջ բավարար լինեն ձեզ համար՝որպես մասնագետի եւ սրտացավ մարդու: Տարիներ տեւած վերականգնման աշխատանքից զատ նաեւ կարողացել եք այնպես ներկայացնել ձեր աշխատանքը, որ տեսանելի լինի նաեւ վերականգնողների բարդ գործը: Կարծում եմ՝ հրաշալի է ստացվել»,- շնորհավորելով նրանց՝նշել է նախարարը:

ՆԱՆԻԿ ԱՂԱՍՅԱՆ

ՍՈՒՐԲ ՁԱՏԻԿ

ՎԵՐԱՀՍԿՈՂԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

Սուրբ Ձատկի տոնակատարությանն ընդառաջ՝ ՀՀ սննդամթերքի անվտանգության տեսչական մարմինը մարտի 20-ից 29-ը ներառյալ վերահսկողական միջոցառումներ է իրականացնում ձվի արտադրությամբ զբաղվող կազմակերպություններում եւ իրացման շուկայում՝ առկա ռիսկերը գնահատելու եւ ոչ պատշաճ որակի ձվի մատակարարումը բացառելու նպատակով:

Այս մասին հաղորդագրություն է տարածել ՀՀ սննդամթերքի անվտանգության տեսչական մարմինը:

Այս պահին հայտնի են «Լուսակերտ Էլիտ» ՍՊ, «Արզնու տոհմային ԹՏԽ» ԲԲ, «Աշտարակ ձու» ՍՊ, Վլադ Հակոբյանի անվան «Համակցված կերերի գործարան» ՓԲ, «Արաքս թռչնաֆաբրիկա» ՓԲ ընկերություններում անցկացված վերահսկողության արդյունքները, համաձայն որոնց՝ նշված արտադրություններում խախտումներ չեն հայտնաբերվել: Նմուշառված ձվերի լաբորատոր հետազոտությունները վկայում են, որ դրանք համապատասխանում են սեղանի ձվի նկատմամբ օրենքով եւ ԵԱՏՄ տեխնիկական կանոնակարգերով սահմանված պահանջներին:

Հայտնի են նաեւ «ՆՈՐ ՁՈՎՔ» ՍՊԸ-ին պատկանող սուպերմարկետների ցանցի երկու մասնաճյուղերում իրականացված դիտարկման արդյունքները: Մասնավորապես՝

● Երեւանի Դավթաշեն 4-րդ թաղամասի 26/1 հասցեում գործող խանութում հայտնաբերվել է «Արաքս» թռչնաֆաբրիկայի արտադրության պիտանիության ժամկետն անցած 20 հավի ձու, որոնց իրացումը կասեցվել է, ձվերը ոչնչացվել են,

● Երեւանի Դավիթ Բեկի 7/3 հասցեում գործող մասնաճյուղում հայտնաբերվել է «Միեր Ավետիսյան» անհատ ձեռնարկատիրոջը պատկանող 22.03.2024թ. արտադրության թերի մակնշմամբ 11 տուփ լորի ձու (յուրաքանչյուրում 20 հատ), որոնց իրացումը կասեցվել է, տուփերը վերադարձվել են մատակարարին՝ թերի մակնշումը շտկելու հանձնարարականով:

Վերահսկողողական միջոցառումները դեռ շարունակվում են, ամփոփ արդյունքները կներկայացվեն լրացուցիչ հաղորդագրությամբ:

● *Անցած 1 օրվա ընթացքում հանրապետությունում արձանագրվել է ճանապարհատրանսպորտային 8 պատահար. 11 մարդ ստացել է տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:*

ԾՐԱԳՐԵՐ

ԳԱՎԱՌԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ

Գեղարքունիքի մարզի Գավառ համայնքի Հայրավանք գյուղում ՀՀ կառավարության կողմից 2022 թվականին իրականացվող սուբվենցիոն ծրագրերի շրջանակներում 2023 թվականին կառուցվել է արտաքին լուսավորության ցանց, մանկական խաղահրապարակ եւ ավտոտրանսպորտային սպասարկման կանգառ:

Ինչպես տեղեկացանք Գավառի համայնքապետարանի աշխատակազմից, սուբվենցիոն 3 ծրագրերի իրականացման համար ներդրվել է 35 միլիոն 86 հազար 435 դրամ, որից 16 միլիոն 913 հազար դրամը ՀՀ կառավարության, 18 միլիոն 173 հազար 435 դրամը Գավառի համայնքապետարանի մասնաբաժինն է:

Հայրավանքի արտաքին լուսավորության ցանցի կառուցման պայմանագրային արժեքը կազմում է 5 միլիոն 515 հազար դրամ, որի 60 տոկոսը հատկացրել է ՀՀ կառավարությունը, 40 տոկոսը՝ Գավառի համայնքապետարանը: Շինարարական աշխատանքները մեկնարկել են 2022 թվականի նոյեմբերից եւ ավարտվել 2023 թվականի սկզբին: Ծրագրի իրականացման արդյունքում արտաքին լուսավորության ցանց է կառուցվել Հայրավանքի Համալիրի, Կոլխոզնիկների, Բարի գալուստ, փողոցներում եւ կենտրոնական փողոցի 1-ին եւ 3-րդ նրբանցքներում, շուրջ 1600 մետր երկարությամբ: Տեղադրվել է ԼԵԴ համակարգով աշխատող 46 լուսատու: Վերոնշյալ փողոցների բնակիչները արտաքին լուսավորության ցանցից օգտվում են առաջին անգամ:

Հայրավանքի մանկական խաղահրապարակի եւ պուրակի կառուցման պայմանագրային արժեքը կազմում է 23 միլիոն 631 հազար 435 դրամ, որի 45 տոկոսը հատկացրել է ՀՀ կառավարությունը, 55 տոկոսը՝ Գավառի համայնքապետարանը: Շինարարական աշխատանքները մեկնարկել են 2023 թվականի օգոստոսից եւ ավարտվել նույն տարվա դեկտեմբերին: Խաղահրապարակը եւ պուրակը կառուցվել է Հայրավանքի կենտրոնական մասում: Ծրագրի իրականացման արդյունքում խաղահրապարակ-պուրակը կահավորվել է մանկական խաղարաններով, զրուցարան-տաղավարներով, կառուցվել է լուսավորության ցանց, ցայտաղբյուր: Ծրագրի շահառու են հանդիսանում Հայրավանք գյուղի մանկահասակ բոլոր երեխաները:

Հայրավանքի ավտոտրանսպորտային սպասարկման կանգառի կառուցման պայմանագրային արժեքը կազմում է 5 միլիոն 940 հազար դրամ, որի 50 տոկոսը հատկացրել է ՀՀ կառավարությունը, 50 տոկոսը՝ Գավառի համայնքապետարանը:

Շինարարական աշխատանքները մեկնարկել են 2023 թվականի հուլիս ամսից եւ ավարտվել նույն տարվա օգոստոսին:

Ծրագրի իրականացման արդյունքում Գավառի պատմամշակութային հուշարձանների պատկերով ու նկարագրով արտացոլված կանգառ է կառուցվել Սեւան-Գավառ մայրուղու Հայրավանքի հատվածում, գյուղի մուտքի մոտ: Ծրագրի շահառու են հանդիսանում Հայրավանք գյուղի բոլոր բնակիչները:

«ԴՈՒԿՈ»

ԲԱՑՎԵՑ ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

Երիտասարդների կարողությունների զարգացմանը, նոր հմտությունների ու գիտելիքների ձեռք բերմանը, մոտիվացմանն ու ներուժի բացահայտմանը, սոցիալականացմանը, զբաղվածության խթանմանը, առողջ ապրելակերպին եւ ինտելեկտուալ ժամանցի կազմակերպմանը նպաստելու նպատակով Դիլիջան խոշորացված համայնքում հանդիսավոր արարողությամբ բացվեց երիտասարդական կենտրոն:

Դիլիջանի «ԴՈՒԿՈ» անվանումը կրող երիտասարդական կենտրոնը ստեղծվել է ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարության եւ «Դիլիջանի երիտասարդների համագործակցության կենտրոն» ՀԿ-ի համագործակցության արդյունքում՝ ՀՀ ԿԳՄՍ նախարարության կողմից «Երիտասարդական կենտրոնների ստեղծման» նպատակով հայտարարված դրամաշնորհի շրջանակներում:

ՀՀ ԿԳՄՍ նախարար Ժաննա Անդրեասյանը նշեց, որ նախատեսվում է մինչեւ 2026 թվականը Հայաստանում ստեղծել 25 երիտասարդական կենտրոն:

Ըստ նրա՝ Դիլիջանում բացված կենտրոնը լուծելու է երիտասարդների ինտելեկտուալ եւ կրթամշակութային ժամանցի ապահովման հարցը:

«Վստահ եմ՝ այստեղ հնարավոր կլինի կազմակերպել տարաբնույթ միջոցառումներ, ծրագրեր: Երիտասարդները հնարավորություն կունենան այցելել այստեղ իրենց օրակարգով, կենտրոնը կնպաստի նաեւ պետական ծրագրերի մասին իրազեկվածության բարձրացմանը»,- նշեց նա:

Նախարարը տեղեկացրեց՝ երիտասարդական կենտրոնների բացումը կառավարության ծրագրի մի մաս է: Նախորդ տարի կառավարության օժանդակությամբ բացվել է 2 կենտրոն: «Այսօր բացվեց Դիլիջանի կենտրոնը, իսկ մի քանի օր առաջ բացվեց Ապարանի երիտասարդական կենտրոնը: 4 կենտրոնի մրցույթ էլ կամփոփվի առաջիկա օրերին, որից հետո պարզ կլինեն այն մարզերի անունները, որտեղ առաջիկայում երիտասարդական կենտրոններ կլինեն»,- ասաց նախարարը:

Ժաննա Անդրեասյանը նշեց, որ կենտրոնների ստեղծման ուղղությամբ իրենց քաղաքականությունը տարածքային համաչափ բաշխվածություն ապահովելն է, որպեսզի բոլոր մարզերում հավասարապես բացվեն նմանատիպ կենտրոններ:

Նախարարը, անդրադառնալով ԿԳՄՍ նախարարին կից հասարակական խորհրդի նիստի ընթացքում քննարկվող «Երիտասարդական քաղաքականության մասին» ՀՀ օրենքի նախագծին նշեց, որ ներկայումս նախարարությունը մշակում է եւ մինչեւ 2024 թվականի հուլիսի 3-րդ տասնօրյակ ՀՀ կառավարության հաստատմանը կներկայացնի «Երիտասարդական քաղաքականության մասին» ՀՀ օրենքի նախագիծը, որով սահմանվել են նաեւ Երիտասարդական միջավայրերի տեսակները եւ դրանց գործունեության առանձնահատկությունները, ինչը մեծապես կնպաստի արդեն ստեղծված եւ հետագայում ստեղծվող երիտասարդական կենտրոնների գործունեության որակի բարելավմանը:

«Դիլիջանի երիտասարդների համագործակցության կենտրոն» ՀԿ-ի հիմնադիր-նախագահ Արթուր Ղազարյանը նշեց, որ իրենց կազմակերպությունը, որի անմիջական նախաձեռնությամբ ստեղծվել եւ գործարկվում է «ԴՈՒԿՈ» երիտասարդական կենտրոնը, ունի 15 տարվա փորձ երիտասարների, կանանց, սոցիալապես առավել խոցելի խմբերի հետ տարաբնույթ ծրագրերի իրականացման գործում: Ուստի «ԴՈՒԿՈ» երիտասարդական կենտրոնի ստեղծումը լավագույն աջակցությունը կդառնա ՀԿ-ի աշխատանքներին՝ ավելի լայնամասշտաբ ու արդյունավետ դարձնելով այս հանրօգուտ գործունեությունը:

««ԴՈՒԿՈ» երիտասարդական կենտրոնի նպատակն է Դիլիջան խոշորացված համայնքի երիտասարդների ներգրավման համար հատուկ պայմաններ ու հնարավորություններ ստեղծելու միջոցով նպաստել նրանց կարողությունների զարգացմանը, նոր հմտությունների ու գիտելիքների ձեռք բերմանը, մոտիվացմանն ու ներուժի բացահայտմանը, սոցիալականացմանը, զբաղվածության խթանմանը, առողջ ապրելակերպին, ինտելեկտուալ ժամանցի կազմակերպմանը, շարժունությանը եւ տեղական մակարդակով որոշումների կայացմանը երիտասարդների ներգրավմանը»,-ասաց նա:

Նա ընդգծեց, որ կենտրոնը նախատեսում է տարեկան կտրվածքով ունենալ 600-800 շահառու, որոնք կմասնակցեն առաջարկվող բազմապրոֆիլ միջոցառումներին՝ սկսած ոչ ֆորմալ կրթական մեթոդներով կարողությունների բացահայտման զարգացման դասընթացներից, վերջացրած հետազոտական, վերլուծական աշխատանքով համայնքային խնդիրների լուծմանն ուղղված նախաձեռնություններով:

Ղազարյանի խոսքով՝ պլանավորվող կրթական միջոցառումներից զատ կենտրոնում նախատեսվում է կազմակերպել համայնքի անդամների ինտելեկտուալ ժամանցը, որին մասնակից կդառնան ոչ միայն երիտասարդները, այլեւ համայնքի տարբեր տարիքի անձիք, իսկ մանկահասակ երեխաներ ունեցող մայրիկների համար կենտրոնում կգործի երեխաների խնամքի ու ժամանցի սենյակ՝ ավելի դյուրին դարձնելով մայրիկների՝ կենտրոնի ծառայություններից օգտվելու գործընթացը:

ԹԱԼԻՆ

ԱՐՏՈՒՅՏԻ ԱՊՕՐԻՆԻ ՈՐՍ

Քնապահպանության եւ ընդերքի տեսչական մարմնի աշխատակիցներն ապօրինի որսի կանխարգելիչ միջոցառումների շրջանակում իրականացվող շուրջօրյա վերահսկողության ընթացքում Արագածոտնի մարզում արձանագրել են որսագողության 2 դեպք: Այս մասին հաղորդագրություն է տարածել է ԲԸՏՄ-ի մամուլի ծառայությունը:

Նշվում է, որ Թալին համայնքի տարածքում որսաշրջանի արգելքի, տափաստանային արտույտի միգրացիայի ընթացքում քաղաքացիներ Տ.Հ.-ն ու Ա.Բ.-ն «MP 155» եւ «ԻԺ-17» տեսակի որսորդական հրացաններով իրականացրել են 26 արտույտի ապօրինի որս:

«Դեպքի առթիվ հարուցված վարչական վարույթի շրջանակներում ապօրինի որս կատարած անձանց պատկանող օրինական զենքերն առգրավված են: Իրավախախտները կենթարկվեն վարչական պատասխանատվության:

Զենքերի բռնագրավման պահանջով համապատասխան հայցեր կներկայացվեն դատարան: Միջոցառումները շարունակվում են»,- նշված է հաղորդագրության մեջ:

«Ժողովուրդ» օրաթերթում եւ Armlur.am կայքում գովազդ, հայտարարություն, հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:

«ԱՐՑԱԽՆ ԱՊՐՈՒՄ Է»

ՑՈՒՑԱՀԱՆԴԵՍ՝ «ԹԵՔԵՅԱՆ» ԿԵՆՏՐՈՆՈՒՄ

Լուսանկարիչ Զոհրաբ Ըռքոյանի լուսանկարներում պատկերված են Լեռնային Ղարաբաղի պատմամշակութային հուշարձանները, որոնցից շատերն արդեն ոչնչացվել են Ադրբեջանի կողմից, իսկ Հադրութի ստեղծագործական կենտրոնի սաների աշխատանքներում Լեռնային Ղարաբաղի տարբեր գավառների նախշերն են գույներն ու ավանդույթները:

Լուսանկարներն ու ձեռագործ աշխատանքները ներկայացված են «Արցախն ապրում է» ցուցահանդեսում, որը բացվեց մարտի 29-ին «Թեքեյան» կենտրոնում:

«Լուսանկարներում Արցախի յոթ շրջանների առավել կարեւոր հուշարձաններն են: Լուսանկարները շատ են, սակայն այստեղ ընդգրկել ենք երեսունը: Կան հուշարձաններ, որոնց լուսանկարներն առաջին անգամ են ցուցադրվում: Կտեսնեք Ջրականի Սուրբ Աստվածածին եկեղեցին, որը հիմնահատակ քանդվել է 2020 թվականի պատերազմից հետո, կտեսնեք ամրոցներ, վանական համալիրներ, կամուրջներ, գեղեցիկ է Շուշիի ընդհանուր քաղաքային տեսարանը պատկերող լուսանկարը»,-ասաց Զոհրաբ Ըռքոյանը:

Նրա հավաստիացմամբ՝ իրենք չեն հուսահատվել: «Արցախն այսօր հակառակորդի ձեռքում է, բայց դա չի նշանակում, որ մենք այն կորցրել ենք: Հույս ունենք, որ մի օր վերադառնալու ենք, եւ այս երեխաները ստեղծագործելու են Շուշիում, Հադրութում, Ստեփանակերտում, Քաշաթաղում, որովհետեւ դա մեր պատմական հայրենիքն է: Լավագույն փաստաթղթերը հենց այս հուշարձանների լուսանկարներն են: Ոչ մի ադրբեջանցի, ոչ մի աղվան նման եկեղեցիներ, վանական համալիրներ չի կառուցել: Եթե իրենք են կառուցել, ինչո՞ւ են հայերեն գրել»,-շեշտեց Ըռքոյանը:

Ցուցահանդեսին Հադրութի ստեղծագործական կենտրոնի սաները ներկայացրել են գորգեր, զարդեր, գոբելեներ, ջրաներկով եւ յուղաներկով արված նկարներ եւ այլ աշխատանքներ:

Կենտրոնը հիմադրվել է 1995 թվականին Լեռնային Ղարաբաղում: 2020 թվականի դեկտեմբերին կենտրոնը վերաբացվել է Երեւանում եւ ունի մասնաճյուղեր ՀՀ մարզերում:

Կենտրոնի տնօրեն Իրա Թամրազյանն ասաց՝ 2023-ին փոքր կոլեկտիվով եկել են Ստեփանակերտից ու միացել Երեւանի գործընկերներին: «Խմբակները պահպանել են իրենց ոճը, աշխատանքներում եւս պահպանում ենք Հադրութի, Դիզակի նախշերը, գույները, պատմությունը: Գորգարվեստում ունենք հաջողություններ: Արտաշատում գորգագործների խումբն է, Մասիսում՝ կարպետագործների: Փորձում ենք ընդլայնվել, եւ սա մեր առաջին ցուցահանդեսն է, երբ ցուցանմուշների տակ գին է գրված: Հաշվի առնելով, որ մենք ամիսներ շարունակ առանց աշխատավարձի ենք աշխատում՝ փորձում ենք վաճառքից ստացված գումարներով ապահովել եւ՛ մեր վարպետներին, եւ՛ մեր կենտրոնի երեխաներին, որ անհրաժեշտ նյութեր ձեռք բերեն»,-շեշտեց Թամրազյանը:

Կենտրոնի դասընթացներն անվճար են: Դասերին հաճախում են երեխաներ ինչպես Լեռնային Ղարաբաղից, այնպես էլ Երեւանից ու մարզերից: «Մենք շատ ուրախ ենք, որ կարողանում ենք համախմբել բոլոր երեխաներին: Երեւանի կենտրոն են հաճախում նաեւ ռուս ընտանիքներից երեխաներ, նրանց ծնողները: Կան երեխաներ Ֆրանսիայից: Ծնողները սովորում են ասեղնագործություն: Այսօր դարձել ենք փոքրիկ ինտերնացիոնալ կենտրոն, եւ երեխաները իրար հետ շատ լավ են շփվում»,-նշեց նա:

Կենտրոնի վարպետները փորձում են բոլոր երեխաների հետ խոսել գրական լեզվով, չեն մոռանում նաեւ Լեռնային Ղարաբաղի բարբառը, որը հետաքրքրում է նաեւ Եր—անի երեխաներին:

Հադրութի ստեղծագործական կենտրոնն աշխատանքային նյութերը ձեռք է բերում հովանավորների աջակցությամբ:

«Ստեփանակերտում կային գորգագործության, կավագործության, կարպետագործության բաժիններ: Այստեղ կփորձենք ընդլայնել դրանք, ձեռք բերել հաստոցներ ու պահպանել Դիզակի նախշերը՝ հաշվի առնելով այն, որ Արցախում Դիզակի գավառը եղել է գորգարվեստի կենտրոն: Ես ուրախ եմ, որ այսօր ամեն տեղ հանդիպում եմ այդ նախշերին ու հիանում: Այդ նախշերով ոչ միայն գորգեր, այլեւ ազգային գուլպաներ, գոբելեներ ենք գործում: Հույս ունեմ՝ հետագայում ավելի մեծ աշխատանքներով կներկայացնենք մեր կենտրոնը»,-շեշտեց Իրա Թամրազյանն ու հիշեցրեց՝ երեք տարվա ընթացքում մասնակցել են շուրջ 70 ցուցահանդեսի: Աշխատանքները ներկայացրել են Բելգիայում, Ֆրանսիայում, ԱՄՆ-ում:

Նա շնորհակալություն հայտնեց «Թեքեյան» կենտրոնին իրենց հյուրընկալելու համար, Հայաստանի բոլոր թանգարաններին, որ իրենց կողքին են, աջակցում են:

ՀՈՒՐԻ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

«ՀԱՐՈՒԹՅԱՆ ԱՎԵՏԻՍ»

ԿՄԵԿՆԱՐԿԻ ԿԱՆԹԵՂՆԵՐՈՎ ԵՐԹԸ

Այսօր՝ ժամը 20-ին, Արարատյան Հայրապետական թեմի առաջնորդանիստ Ս. Սարգիս եկեղեցուց կմեկնարկի «Հարության Ավետիս» խորագրով կանթեղներով երթը: Այն արդեն 10-րդն է: Երթը նախաձեռնել եւ իրականացնում են Արարատյան Հայրապետական թեմի երիտասարդաց միությունների անդամները թեմի առաջնորդական փոխանորդ Գերաւնորհ Տ. Նավասարդ արքեպիսկոպոս Կճոյանի օրհնությամբ: Այս մասին հայտնում են qahana.am-ից:

Երթի մասնակիցները Ճրագալույցի Ս. Պատարագից հետո կստանան Նավասարդ Սրբազանի օրհնությունն ու Ս. Հարության Ավետիսը մարդկանց փոխանցելով՝ Մ. Մաշտոցի պողոտայով եւ Ամիրյան փողոցով կքայլեն դեպի Հանրապետության հրապարակ:

Թեմի երիտասարդական միությունների հոգեւոր համակարգող Տ. Պետրոս ավագ քահանա Մալյանի գլխավորությամբ մասնակիցները քարե գորգի վրա խաչ կկազմեն՝ ի նշան Քրիստոսի Հրաշափառ Հարության:

«Հարության Ավետիս» քայլերթին կարող են միանալ բոլոր ցանկացողները:

ՄԱՐԶԱԿԱՆ

ԹՅՈՒԻԼԵՐԻ ԱՅԳԻՆԵՐՈՒՄ

Փարիզի 33-րդ ամառային Օլիմպիական խաղերի բացման արարողության ջահը կվառվի Լուվրի խորհրդանշական թանգարանի դիմաց գտնվող Թյուիլերի այգիներում:

Դեռեւս հայտնի չէ, թե ով է վառելու ամառային Օլիմպիական խաղերի ջահը բացման արարողության օրը՝ հուլիսի 24-ին:

Հայաստանը 33-րդ ամառային Օլիմպիական խաղերին դեռեւս ունի 7 մասնակից՝ հրաձիգ Էլմիրա Կարապետյանը, ըմբիշներ Արթուր Ալեքսանյանը, Մալխաս Ամոյանը, Սլավիկ Գալստյանը, Վազգեն Թեւանյանը, Արսեն Հարությունյանը, մարմնամարզիկ Արթուր Դավթյանը:

Փարիզի 33-րդ ամառային Օլիմպիական խաղերը կկայանան 2024 թվականի հուլիսի 26-ից օգոստոսի 11-ը: Խաղերի բացման արարողությունը կլինի բացառիկ, քանի որ առաջին անգամ է, որ այն անցկացվելու է ոչ թե մարզադաշտում, այլ Ֆրանսիայի սրտում՝ Սեն գետի երկայնքով: Փարիզը Լոնդոնից հետո երկրորդ քաղաքն է, որը երրորդ անգամն է հյուրընկալում Օլիմպիական խաղերը (1900, 1924, 2024): 33-րդ ամառային Օլիմպիական խաղերի բացման արարողությունը խորհրդանշական օր է, քանի որ 1924 թվականին խաղերի փակման արարողությունը կայացել է այդ օրը:

Մասնակից հավաքականները բացման արարողությանը կմասնակցեն նավակներով: Փարիզի Օլիմպիական խաղերում 32 մարզաձեւում կխաղարկվի 329 մեդալ, իսկ մասնակիցների թիվը կգերազանցի 10.000-ը: Այս Խաղերում նոր մարզաձեւ է լինելու բրեյք դանսը: Փարիզի Օլիմպիական խաղերի մի քանի մարզաձեւերի մրցումներ կանցկացվեն Թահիթիում, Նանտում, Լիոնում, Մարսելում, Սենթ-Էթյենում եւ այլն: Այս Խաղերում կաշխատի մոտ 45.000 կամավոր աշխարհի տարբեր երկրներից:

Փարիզի Խաղերի կազմկոմիտեն ներկայացրել է նաեւ ՕԽ-ի թալիսմանին՝ մասկոտին: Թալիսմանը, որը ստացել է Ֆրիգ (Phryges) անվանումը, նման է ֆրանսիական գլխարկների եւ ունի կարմիր գույն: Ֆրիգիական գլխարկը համարվում է ֆրանսիական հեղափոխության եւ ազատության խորհրդանիշ:

ԿՄՆԱ ԱԿՈՒՄԲՈՒՄ

Գերմանական «Բայեր»-ի գլխավոր մարզիչ Չավի Ալոնսոն որոշում է կայացրել եւս մեկ մրցաշրջան մնալ ներկայիս ակումբում:

Այս մասին գրում են գերմանական ՋԼՄ-ները: Ըստ պարբերականների՝ առաջիկա շաբաթվա ընթացքում Ալոնսոն անձամբ կհայտարարի այդ մասին:

Ավելի վաղ լուրեր կային, որ անգլիական «Լիվերպուլ»-ը մրցաշրջանի ավարտից հետո, երբ թիմից կհեռանա Յուրգեն Կլոպը, ակումբի գլխավոր մարզչի պաշտոնում տեսնում է հենց Ալոնսոյին, ով ժամանակին հանդես է եկել «կարմիրների» կազմում:

Ընթացիկ մրցաշրջանում «Բայեր»-ը գլխավորում է Բունդեսլիգայի մրցաշարային աղյուսակը եւ 10 միավոր ավելի ունի 2-րդ տեղում ընթացող «Բավարիա»-ից:

●Ապրիլի 8-ին «Արամ Խաչատրյան» համերգասրահում տեղի կունենա Հայաստանի պարի պետական անսամբլի համերգային երեկոն: Տոմսերի արժեքը՝2500-8500 դրամ: Սկիզբը՝ժամը 19:00-ին:

ԵՂԵ՛Ք ՏԵՂԵԿԱՑՎԱԾ

Էջը՝ ՄԱՐԻԱՄ ԴԱՆԻԵԼՅԱՆԻ

ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

ՀԱՐՑ. Ի՞նչ փաստաթղթեր են անհրաժեշտ տվյալ հաստատություն սովորողի ընդունելության եւ տեղափոխման համար:

Արաքսյա Գրիգորյան (49 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. ՀՀ ԿԳ նախարարի N 1640-Ն /24.11.2010թ./ հրամանով հաստատված «Դպրոցական տարիքի երեխաներին հանրակրթության մեջ ընդգրկելու, սահմանված ժամկետից ուշ հանրակրթության մեջ ընդգրկվող երեխաների կրթության կազմակերպման եւ հանրակրթական ուսումնական հաստատությունից սովորողին այլ ուսումնական հաստատություն տեղափոխելու/ազատելու կարգի» 25-րդ կետի համաձայն՝ սովորողին հաստատություն ընդունելու համար ծնողը (նրա օրինական ներկայացուցիչը) ներկայացնում է՝

1) դիմում՝ ուղղված տնօրենին,

2) սովորողի հանրային ծառայության համարանիշի կամ դրանից օրենքով սահմանված կարգով հրաժարված լինելու մասին տեղեկանքի պատճենը,

3) 3x4 չափի լուսանկար՝ «Կրթության կառավարման տեղեկատվական համակարգում» սովորողի էլեկտրոնային անձնական գործում վերբեռնելու նպատակով,

4) եզրակացություն՝ «Կյանքի դժվարին իրավիճակում գտնվող երեխաների տեղեկատվական համակարգում» հաշվառված լինելու վերաբերյալ՝ տրված սոցիալական ծառայություններ տրամադրող տարածքային կառավարման պետական մարմնի կողմից (ըստ անհրաժեշտության),

5) նախնական (արհեստագործական) կամ միջին մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատություններից տեղափոխվելու դեպքում՝ տեղեկանք տվյալ հաստատությունում ուսումնառության ժամկետների, ուսումնասիրած առարկաների, ուսումնական տարվա ընթացքում տեղափոխվելիս՝ նաեւ ընթացիկ եւ կիսամյակային գնահատականների, բացակայությունների քանակի մասին,

6) եզրակացություն՝ տրված սոցիալական ծառայություններ տրամադրող տարածքային կառավարման պետական մարմնի կողմից՝ հանրակրթական հատուկ դպրոց ընդունվելու համար (ըստ անհրաժեշտության):

ՀՀ ԿԳՄՍ նախարարություն

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Նշված կարգի 29-րդ կետի 3-րդ եւ 4-րդ ենթակետերով սահմանված դեպքերում անհրաժեշտ է նաեւ փաստաթուղթ՝ զինվորական կոմիսարիատից:

ՄՇԱԿՈՒՅԹ

ՀԱՐՑ. Ի՞նչ կարգով է իրականացվում մշակութային արժեքների ժամանակավոր ներմուծումը:

Արամ Սողոմոնյան (48 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Մշակութային արժեքների ժամանակավոր ներմուծումն իրականացվում է՝ ՀՀ կառավարության 2007 թ. հունիսի 1-ի N 827-Ն որոշման պահանջների համաձայն:

ՀՀ ԿԳՄՍ նախարարություն

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Մշակութային արժեքներ ժամանակավոր ներմուծելիս հայտատուն մաքսային մարմին պետք է ներկայացնի հայտարարագիր, մշակութային արժեքներն ու դրանց լուսանկարները /3 օրինակ/: Մաքսային մարմնում համապատասխան ընթացակարգով ձեւակերպվում է մշակութային արժեքների ժամանակավոր ներմուծումը՝ «Ժամանակավոր ներմուծում» մաքսային ռեժիմով:

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարը՝ համացանցից

2027 թվականի ծանրամարտի աշխարհի առաջնությունը կկայանա Երեւանում:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը Բաժանորդագրվելու համար կարող եք դիմել

«Հայմամուլ» ՓԲԸ
հեռ. 45-82-00, 45-19-11

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ 52-5301

Առաքումը՝ ԱՆՎՃԱՐ:

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

ԱՌԱՋԱՐԿ
հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը եւ ուղարկել նշված հասցեով: Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ ____________

Ազգանուն՝ ____________

Առաքման հասցե՝ ____________

Բջջային եւ/կամ քաղաքային հեռախոս՝ ____________

Հեռ.՝(060) 490049

0023, Արշակունյաց 2, 5-րդ հարկ, 518ս.

ԵՂԱՆԱԿԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ



Մարզ	Ջերմաստիճան
Շիրակ	- 3 - 7 / + 8 + 13
Կոտայքի լեռներ	- 3 - 6 / + 8 + 11
Կոտայքի նախալեռներ	- 2 + 1 / +12 + 13
Գեղարքունիք	- 3 - 6 / + 6 + 9
Լոռի	- 1 + 3 / +11 + 13
Տավուշ	- 1 + 2 / +13 + 16
Արագածոտնի լեռներ	0 + 3 / + 8 + 10
Արագածոտնի նախալեռներ	+ 3 + 6 / +12 + 15
Արարատ	+ 2 + 5 / +15 + 17
Արմավիր	+ 1 + 4 / +15 + 17
Վայոց ձորի լեռներ	- 3 - 6 / + 8 + 11
Վայոց ձորի նախալեռներ	+ 2 + 4 / +15 + 17
Սյունիքի հովիտներ	+ 5 + 8 / +15 + 19
Սյունիքի նախալեռներ	- 1 + 3 / +11 + 15
ԼՂՀ	- 1 + 3 / +10 + 14
Երեւան	+ 6 + 8 / + 11 + 13

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝ **010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **29.3.2024**
Հասցեն՝ Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ.Համբարձումյան 2/21

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
Խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, **Գ** նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. *«Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:*